

Սիրել այն մարդկանց որին

Աստված մեզ է տվել

“Սա է իմ պատվիրանը, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի:” Հովհաննես 15:12

“Սերը հանդուրժող է, սերը բարի է. սերը չի նախանձում, չի գոռոզանում, չի մեծամտանում: Անամոթություն չի անում, սեփական շահը չի փնտրում, բարկությանը չի գրգռվում, չար բան չի մտածում, անիրավության վրա չի ուրախանում, այլուրախանում է ճշմարտության հետ, ամեն բան հանդուրժում է, ամեն բանի հավատում, ամեն բանի հանդեպ հույս ունի, ամեն բանի համբերում է: ”
Ա Կորնթացիս 13:4-7

1- Սիրիր Չույգիդ

“Նույնպես և դուք, ամուսիններ, նրանց հետ խոհեմությամբ սպրեք, կնոջը որպես դուրաբեկ անոթի՝ վերաբերվեք, պատվե՛ք իբրև կյանքի շնորհի ժառանգակիցների, որպեսզի ձեր աղոթքներին արգելք չլինի:” Ա Պետրոս 3:7

“Քրիստոսի երկյուղով միմյանց հնազանդ եղեք: Կանայք, ձեր ամուսիններին հնազանդվե՛ք, ինչպես Տիրոջը, որովհետև ամուսինը կնոջ գլուխն է, ինչպես Քրիստոսն էլ եկեղեցու գլուխն է, և ինքն է մարմնի Փրկիչը: Եվ ինչպես եկեղեցին հնազանդ է լինում Քրիստոսին, այնպես էլ կանայք իրենց ամուսիններին ամեն ինչում թող հնազանդ լինեն:” Եփեսացիս 5:21-24

2- Սիրիր Ընտանիքիդ

“Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին Տիրոջով, քանի որ սա է ճիշտը: «Պատվի՛ր քո հորն ու մորը,- սա է առաջին պատվիրանը, որն ուղեկցվում է փոխհատուցման խոստումով,- որպեսզի բարիք գտնես ու երկրի վրա երկար ապրես»: Հայրե՛ր, ձեր զավակներին մի՛ բարկացրեք, այլ նրանց Տիրոջ խրատով ու կրթությամբ մեծացրեք:”
Եփեսացիս 6:1-4

3- Սիրիր Հարևանիդ

“Ոչ ոքի ոչինչ պարտական չմնաք, բացի միմյանց սիրելուց, որովհետև ընկերոջը սիրողն օրենքը կատարել է: Քանի որ «Մի՛ շնացիր», «Մի՛ սպանիր», «Մի՛ գողացիր», «Սուտ մի՛ վկայիր», «Մի՛ ցանկացիր» և ուրիշ ի՛նչ պատվիրաններ էլ որ կան, այս խոսքի մեջ են բովանդակվում՝ «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ»: Սերն ընկերոջ նկատմամբ չարիք չի գործի. ուրեմն օրենքի լրումը սերն է:”
Հռովմացիս 13:8-10